ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք Գլխավոր փողոց 15, Հեռ.(0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 49-Ն

ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 34-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթների համայնքի ավագանին որոշում է.

1.Ընդունել Նուռնուս համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի N34 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ- (5) Դեմ-(0) Ձեռնպահ-(0)

ԱՎԴԱԼՅԱՆ ՍՈՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունվել է Նուռնուս համայնքի ավագանու 2016թվականի
նոյեմբերի 28 -ի N49-Ն որոշմամբ

2016 թվական

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նուռնուս համայնքի ավագանու 2016 թվականի
նոյեմբերի 28-ի N 49-Ն որոշման

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և համայնքի բնակչության բարեկեցության, բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ իրականացնում է ժողովրդի իշխանությունը, օրենքի շրջանակներում ապահովում համայնքային խնդիրների լուծումը և տնօրինում համայնքի սեփականությունը:

Համայնքի ավագանին կազմված է 5 հինգ անդամներից, գործում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս գյուղի Գլխավոր փողոցի թիվ 15 հասցեում:

1. Նպատակը

1. Սույն կանոնակարգն ընդունված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա:
2. Սույն կանոնակարգը նպատակաուղղված է Նուռնուս համայնքի ավագանու, ավագանու հանձնաժողովների և անդամների գործառույթների արդյունավետ կատարմանը, ինչպես նաև նրանց փոխգործակցությանը համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝աշխատակազմ) հետ տեղական ինքնակառավարման իրականացման գործում:
3. Սույն կանոնակարգը կարգավորում է ավագանու նիստերի անցկացման վայրը, կարգը, ինչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, քննարկման, ընդունման ու հրապարակման կարգը:

2.Համայնքի ավագանու գործունեության կազմակերպումը

1. Համայնքի ավագանին գործում է սույն կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, ինչպես նաև իր ստեղծած մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:
2. Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ՝ համաձայն ավագանու կողմից հաստատված ժամանակացույցի: Կարող են անցկացվել նաև արտահերթ նիստեր:

3. Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ «Տեղական ինքնակառավարման մասին» << օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված կարգով գործունեությունն իրականացնելու համար:

4. Համայնքի ավագանու գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:

5. Համայնքի ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք Գլխավոր փողոց 15, Հեռ.(0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » նոյեմբերի 20 16 թվականի N 50- Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի "բ" կետի համայնքի ավագանին որոշում է.

1. Նուռնուսի համայնքապետարանի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի քանակական կազմում ընդգրկել ավագանու 3 անդամի:

2. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկել ավագանու անդամներ՝ Աղվան Վլադիմիրի Հարությունյանին, Մնացական Համազասպի Մկրտչյանին և Մարատ Լյուդվիգի Վարդանյանին:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 30-ի ,,Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին,, N 36 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ- (5) Դեմ-(0) Ձեռնպահ-(0)

ԱՎԴԱԼՅԱՆ ՍՈՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք Գլխավոր փողոց 15. Հեռ.(0222) 6-84-51, nurnus.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 թվականի N 51-Ն

ՆՈՒՌՆՈՒՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության րենքի

70 -րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.համայնքի ավագանին որոշում է.

1.Նուռնուս գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 5-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝.

1)3112տողի 11 բաժնի 1-ին խմբի 2-րդ դասի (պահուստային միջոցներ) 4891 հոդվածում ,,915 000,, թիվը փոխարինել ,,898 000,,թվով:

2)2421 տողի, 04 բաժնի 2-րդ խմբի 1-ին դասի 5129 (այլ մեքենաներ և արքավորումներ) հոդվածում ,,2490 900,, թիվը փոխարինել ,,2507900,, թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ- (5) Դեմ-(0) Ձեռնպահ-(0)

ԱՎԴԱԼՅԱՆ ՍՈՍ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 32-Ն

ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Ընդունել Ջրաբեր համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2008 թվականի դեկտեմբերի 2 ի <<Համայնքի ավագանու կանոնակարգի ընդունման մասին>> 10/1-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻ
2. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԵԴՐԱԿ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

Համայնքի ղեկավար՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ